ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
8-րդ՝ ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ

ԹԵՄԱ՝ «ԳԵՂԱՇԵՆՈՒՄ ԱՊՐՈՂ ՏՈՀՄԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ, ՆՐԱՆՑ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ»

«Նախագծային աշխատանք»- ի համար նախատեսված 6-շաբաթյա պարապմունքների ընթացքում 8-րդ բ դասարանի աշակերտները խորությամբ ծանոթացան գյուղի պատմության վերաբերյալ հավաքած բոլոր գրավոր և բանավոր աղբյուրներին: Նախօրոք կարդացել էին համագյուղացի, դպրոցի նախկին տնօրեն Գեղամ Ասատրյանի «Կոտայքի Գեղաշենի պատմությունը» գիրքը, որը հրատարակվել է 1997 թվականին: Որոշեցին թարմացնել այն և ավելացնել վերջին երեսուն տարիների ընթացքում կատարված իրադարձություններն ու փոփոխությունները:

Այդ նպատակով եղան այն տարածքներում,

ա. որտեղ սկզբում ապրել են մեր նախնիները,

բ. այցելեցին նրանց առաջին կեցավայրը, որտեղ իրենց հանգրվանն են գտել 1827-1828 թվականների պատերազմների պատճառով Պասկահայաստանից ու Տաճկահայաստանից գաղթած գեղաշենցիների պապերն ու նրանց սերունդները

գ. կատարեցին ուսումնասիրություններ այդ վայրերում

դ. զրուցեցին Գեղաշենում ապրող տոհմերի պատմությանը գիտակ մարդկանց հետ

ե. ուսումնասիրեցին նրանց տոհմածառերն ու տոհմերի առաջացման պատմությունը՝ ներկայացնելով նրանց տոհմածառերը, կառուցվածքը, կազմելու առանձնահատկությունները

զ. բացատրեցին և՛ տոհմերի, և՛ նրանց մականունների առաջացման պատմությունը

է. ձայնագրեցին ու կատարեցին նկարահանումներ

ը. գրեցին նրանց մասին զեկուցումներ

թ. արտասանեցին բանաստեղծություններ, կատարեցին երգեր

ժ. ներկայացրին հարսանեկան ավանդույթ-ծեսի մի հատված:

Աշխատանքի վերջնարդյունքը եղավ այդ տոհմերի ու նրանց առաջացման, կյանքն ու գործունեությունը ներկայացնող գիքույկ-ալբոմ, տեսաֆիլմ և տեսասահիկ: Ստացան նաև տարբերանշաններ ու այդ ամենի մասին հետաքրքիր ձևով ներկայացրին տվյալ տոհմի շառավիղ հանդիսացող աշակերտները հարց ու պատասխանի ձևով:

Կատարեցին հետաքրքիր վերլուծական աշխատանքներ: Հարցերին պատասխանեցին հստակ՝ քաջատեղյակ լինելով նյութերի մանրամասներին:

Ներկայացված նյութն աչքի էր ընկնում պատմական տվյալ ժամանակաշրջանի ընկալման խորությամբ: Այն ներկայացվեց ներկայի տեսաֆոնին և ապագայի տեսլականով, որովհետև այս նախագծային աշխատանքն ունի շարունակական բնույթ ու այսպիսի նշանաբան՝ «Հենվելով անցյալին, ապրելով ներկայում, նայելով ապագային»:

Դասարանի աշակերտները խոստացան մինչև 2028 թվականի աշուն գրել ու տարբեր ձևերով ներկայացնել իրենց գյուղի պատմությունը գրքի, տեսաֆիլմի տեսքով, որովհետև հենց այդ թվականին նշվելու է Գեղաշեն գյուղի հիմնադրման 200-ամյակը: Եվ դա կլինի իրենց ամենալավ ու կարևոր նվերը գյուղի նորաբաց պատմության թանգարանին ու իրենց նախապապերի հիշատակին:

Հետազոտությունը կատարված էր մանրակրկիտ, և հանձնարարվածից շատ ավելի նյութ ներկայացվեց:

Ուսուցչուհի՝ Գոհար Ղազարյան